ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 124 – Ա 24 փետրվարի 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի դրույթներով

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ որոշման N 2 հավելվածի 52-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմում

1) «Գրիգորյան Սաթենիկ Էդիկի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Բաղիշջանյան Վարդան Ալֆրեդի /վերադասի ներկայացուցիչ/ բառերով.

2) «Ալեքսանյան Հայկ Աշոտի/վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Բարսեղյան Արշակ Գևորգի /վերադասի ներկայացուցիչ/ բառերով.

3) «Կարապետյան Հայկ Հովիկի /վերադասի ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Մանուկյան Վարդան Բեգլարի /վերադասի ներկայացուցիչ/ բառերով.

4) «Հովհաննիսյան Լազր Կամոյի /ՏԻՄ ներկայացուցիչ/» բառերը փոխարինել «Սիմոնյան Հուսիկ Ադամի /ՏԻՄ ներկայացուցիչ/ բառերով:

24.02.2022

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ